«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինակ ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում**

ԱՌԱՐԿԱ **Դասվար**

ՀԵՂԻՆԱԿ **Արմինե Գաբրիելյան**

ՄԱՐԶ **Կոտայք**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ **Հրազդանի թիվ 14 հիմնական դպրոց**

Բովանդակություն

Ներածություն_____ 3

Գլուխ 1. Դպրոցի և ընտանիքի սոցիալական համագործակցության ժամանակակից խնդիրները կրտսեր դպրոցականի դաստիարակության հարցում_____4

Գլուխ 2. Ծնողների ներգրավումը դպրոցական կյանքի մեջ_____8

Եզրակացություն_____15

Օգտագործված գրականության ցանկ և հղումներ_____16

Ներածություն

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ժամանակակից երեխաները ֆիզիկապես ու մտավորապես շատ ավելի զարգացած են, ավելի բարձր կարողություններ ունեն, քան տարիներ առաջվա իրենց հասակակիցները: Նրանք զարմացնում են ծնողներին ու մանկավարժներին իրենց արտահայտած ինքնատիպ մտքերով, հետաքրքրությունների խորությամբ: Փոխվել է նաև երեխայի շրջապատող աշխարհը: Ժամանակակից ինֆորմացիայի միջոցները, ծնողների գրագիտության բարձր մակարդակը, իրենց պարտականությունների բարձր գիտակցումը ժամանակակից երեխային հասցրել են զարգացման մի նոր, ավելի բարձր աստիճանի: Այսօրվա վեց տարեկան երեխան հաճախում է կինո, թատրոն, մարզադաշտ, թանգարան, իր ավագ ընկերների հետ խոսում է տիեզերքից, ինքնուրույն կարծիքներ հայտնում իր տեսածի, լսածի մասին: Այսօրվա վեց տարեկանի սովորելու, կարդալու ձգտումներն ավելի վաղ են ի հայտ գալիս: Ուստի, շատ կարևոր է ուսուցիչ - աշակերտ - ծնող փոխկապակցված եռանկյունին:

Գլուխ 1. Դպրոցի և ընտանիքի սոցիալական համագործակցության ժամանակակից խնդիրները կրտսեր դպրոցականի դաստիարակության հարցում

«Դպրոց և ընտանիք: Նման է ծովին և ափին: Ափին երեխան առաջին քայլերն է անում, իսկ հետո նրա առջև բացվում է գիտելիքի ծով: Եվ այս ծովի ընթացքը դնում է դպրոցը»:

Լև Կասիլ



Երեխայի արդյունավետ ուսումնառությունը դպրոցում (բարձր առաջադիմություն, հոգեկան հավասարակշիռ և բնականոն զարգացում, ջերմ հարաբերություններ դասընկերների և ուսուցիչների հետ և այլն) պայմանավորված չէ միայն ուսումնական գործունեության հաջող մեկնարկով: Դրան հասնելու քայլերը պետք է կատարվեն ավելի վաղ՝ մինչ դպրոց հաճախելը: Անհրաժեշտ է հնարավորիս օգնել երեխային և ծնողին դժվարությունները (գրուսուցում, կարդալու կարողությունների զարգացում, նոր միջավայրում ինքնադրսևորում և այլն) սահուն, առանց հուզական լարվածության ու հոգեկան ապրումների հաղթահարելու համար:

Այն սոցիալական դերը, որ երեխան ստանձնում է ուսումնական հաստատությունում, նոր պարտականություններ է առաջադրում երեխային. ժամանակին և պարտաճանաչ կերպով հաճախել դպրոց, լսել ուսուցչին, ուշադիր և ակտիվորեն մասնակցել դասերին, կատարել տրված հանձնարարությունները, շփվել այլ երեխաների հետ, ստանձնել այս կամ այն դերը և այլն: Դա ծնողին ստիպում է ուշիմ և հետևողական լինել երեխայի պարտականությունները կատարելու հարցում: Եվ կամա թե ակամա վերջինս երեխայի

ձեռքբերումներն սկսում է համեմատել մյուս երեխաների արդյունքների հետ: Եվ երբ երեխայի առաջադիմությունը կամ վարքագիծը չի գոհացնում իրեն, սկսում է անհանգստանալ, մտահոգվել, ինչն էլ ուղեկցվում է երեխայի նկատմամբ ընդգծված խստապահանջությամբ: Արդյունքում առաջադիմության ցուցանիշներն ավելի են ընկնում, իսկ երեխան դառնում է նյարդային: Նա փորձում է հակառակվել ծնողի ճնշումներին, երբեմն էլ հրաժարվում է դպրոց հաճախել: Եվ որպեսզի ծնողի գիտակցությանը հասցնենք այն փաստը, որ յուրաքանչյուր երեխա անհատականություն է, և չի կարելի համեմատել նրան այլ մարդու հետ՝ թերագնահատելով կամ գերագնահատելով վերջինիս հնարավորությունները, անհարժեշտ էառաջին իսկ ծնողական ժողովին անդրադառնալ այս խնդրին: Ծնողների հետ հանդիպման ժամանակ պետք է ստեղծել փոխադարձ հարգանքի մթնոլորտ: Ծնողը համոզվելու է, որ իրեն մտահոգող հարցերին կտրվեն սպառիչ պատասխաններ, և կցուցաբերվի համապատասխան օգնություն:

Այսպիսով, երեխայի բարեհաջող մուտքը նոր ուսումնական գործունեություն, կախված է նրա հոգեկան պատրաստվածության աստիճանից: Այստեղ մեծ է ընտանիքի դերը: Վստահաբար պետք է ասել, որ երեխայի՝ որպես դաստիարակության սուբյեկտի, ձևավորումն առաջին հերթին սկսվում է ընտանիքում: Հենց ընտանիքում են դրվում նրանց սոցիալականացման և անձնային ձևավորման հիմքերը: Այն պետք է երեխայի համար լինի հոգեկան հավասարակշռության, պաշտպանվածության և ապահով զգացողության օրրան: Եվ որպեսզի երեխան հաղթահարի իր տարիքին բնորոշ վախերը և ձեռք չբերի ծնողի կողմից փոխանցվող անվստահությունը, անհարժեշտ է նախ և առաջ պարզել ծնողների թաքնված, երբեմն չգիտակցված վախերը:Առաջին իսկ ծնողական ժողովին պետք է ծանոթանալ ծնողական կազմին, պարզել, թե ինչպիսի ակնկալիքներով, մտավախություններով և խնդիրներով է ծնողն իր երեխային բերում դպրոց:

Երեխայի դաստիարակությունը պետք է սկսել ծնվելուն պես, դեռևս օրորոցում: Ինչպես Վ. Հյուգոն էր ասում.«Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևին փորագրված տառերին, որոնք աճում են, ծավալվում նրա հետ և կազմում նրա անկապտելի մասը»:

Ընտանիքը այն սոցիալական միջավայրն է, որտեղ բավարարվում են երեխայի կարևորագույն պահանջմունքները, այդ թվում՝ սիրո և կապվածության, ապահովության և պաշտպանվածության պահանջմունքները:

Մեծ մանկավարժ Ժան Ժակ Ռուսսոն նկատել է, որ ընտանիքից հետո յուրաքանչյուր դաստիարակ ավելի քիչ ազդեցություն ունի երեխայի վրա:

Փոխվել է ուսուցիչ- աշակերտ - ծնող եռանկյունին: Այն մտայնությունը, թե դպրոցը չպետք է աշխատի ծնողի հետ, որ դաստիարակությունը միայն ծնողի գործն է, թյուր կարծիք է: Աշակերտի հաջողությունը դպրոցի և ընտանիքի ընդհանուր նպատակն է: Հոգեբաններ Ա. Լ. Ժուռավլյովը, Ն. Ֆ. Ռադիոնովը գտնում են, որ երեխայի կրթությունը մի գործընթաց է, որը վերաբերում է ոչ միայն դպրոցին, այլև ընտանիքին, հետևաբար, անհրաժեշտ է նրանց համատեղ աշխատանքը:

Մեր հասարակությանն արժանի քաղաքացի դաստիարակելու նպատակով պետք է համագործակցեն ծնողները և ուսուցիչները: Անցել են այն ժամանակակները, երբ ծնողը բավարարվում էր միայն առավոտյան երեխային դպրոց բերելով և կեսօրին՝ տուն տանելով:Իսկ թե երեխան ինչպես իրեն կդրսևորի դպրոցում, դիտվում էր միայն որպես ուսուցչի մտահոգության խնդիր:

ԸՆՏԱՆԻՔ – ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼ



Գլուխ 2. Ծնողների ներգրավումը դպրոցական կյանքի մեջ

« Ինչու՞ ես ատեմ երեխային այսօրվա վատի համար, ես նրան կսիրեմ այն լավի համար, ինչը նրա մեջ դաստիարակելու եմ վաղը»:

Վ.Ա.Սուխոմլինսկի

Զարգացման տարբեր խանգարումներ և հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելիս առանց ծնողների ներգրավվածության և փոխհամագործակցության գրեթե հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքների: Ուստի ծնողավարության հմտությունների տիրապետումը առաջնային է: Ուսուցիչը պետք է կարողանա բնականոն հունի մեջ դնել ընտանիքի բոլոր անդամների համատեղ դաստիարակչական ներուժը: Իր գործունեության մեջ նա հաշվի է առնելու ընտանեկան դաստիարակության ոճերը, ընտանիքի տիպաբանությունը և երեխաների հիմնական տիպերը: Դրանց թվի կարելի է դասել՝

1.*Համագործակցություն.* մայրը երեխային մղում է գործողությունների: Այստեղ գերակշռում են փոխադարձ զիջողականությունը, ճկունությունը և փոխըմբռնումը:

2.*Մեկուսացում.* ընտանիքում համատեղ որոշումներ չեն ընդունվում: Նկատվում է օտարացում ընտանիքից:

3.*Մրցակցություն.* ծնողները փորձում են ինքնահաստատվել երեխայի հաշվին: Այդ փոխհարաբերություններին բնորոշ են մշտական հակազդեցությունը և քննադատությունը:

4. *Կեղծ համագործակցություն.* ծնողներն ու երեխաներն իրենց պահում են եսասիրական ձևով: Համատեղ որոշումների դրդապատճառ առաջանում է միմյանց նկատմամբ անկեղծ հարաբերությունների բացակայության պայմաններում:

Այսօրվա սերունդը պետք է քայլի ժամանակին համընթաց, լինի բանիմաց, անկաշկանդ, իմանա և գիտակցի իր իրավունքները ու պարտականությունները: Կրթության արդիական մեթոդներն օգնում են, որ երեխան գիտելիքներ ստանա՝ օգտագործելով իր

բոլոր ընդունակությունները, ինչպես և վստահություն ձեռք բերի սեփական ուժերի նկատմամբ:

Դասավանդման ամենաօգտակար կողմերից մեկը ծնողների հետ դրական հարաբերությունների ստեղծումն է: Արդյունավետ ծնող-ուսուցիչ հաղորդակցությունը կարևոր է ուսուցչի հաջողության համար: Ծնողների և ուսուցչի միջև լավ հարաբերություններն անգնահատելի են ուսուցչի ժամանակն առավելագույնի հասցնելու համար այդ աշակերտի հետ: Աշակերտը, ով գիտի, որ ուսուցիչը կանոնավոր կերպով շփվում է իր ծնողների հետ և գիտի, որ իր ծնողները վստահում են ուսուցչին, հավանաբար ավելի մեծ ջանքեր կգործադրի դպրոցում:

Շատ ուսուցիչներ թերագնահատում են իրենց աշակերտների ծնողների հետ հարաբերություններ կառուցելու արժեքը: Ծնողները կարող են լինել լավագույն ընկերներ կամ վատագույն թշնամիներ: Վստահելի համագործակցային հարաբերություններ կառուցելը ուսուցչի համար դժվար, երակարատև աշխատանք է, միաժամանակ՝ հեռանկարային: Հետևյալ հինգ խորհուրդները կարող են օգնել ուսուցիչներին ամուր հարաբերություններ հաստատել այն աշակերտների ծնողների հետ, որոնց ծառայում են.

- կառուցեք նրանց վստահությունը
- լսեք նրանց
- հաճախակի շփվեք
- փաստաթղթավորեք յուրաքանչյուր հաղորդակցություն
- կեղծեք, երբ այն անհրաժեշտ է

* http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների ավելի լավ արդյունքներ: Աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սակայն ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է ուսուցիչը նպաստել նրանց ներգրավվածությունը: Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»:

«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը:

«Ծնողների ներգրավվածությունը» ծնողների համար կարող է նախատեսել.

- Երեխայի կողմից լավ կատարած աշխատանքի խրախուսում և գովաբանում ծնողի կողմից:
- Ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և իրենց երեխայի առաջընթացի քննարկում:
- Տնային առաջադրանք կատարելիս աշակերտին օգնության ցուցաբերում:

Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող են համարվել այն բոլոր անձիք, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակության գործում:

Ծնողների ակտիվ ներգրավվումը դրական է անդրադառնում և՛ դպրոցական հասարակության, և՛ ծնողների, և՛ աշակերտության վրա: Քննարկենք յուրաքանչյուր խմբի օգուտը:

Օգուտ աշակերտին.

- Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը:
- Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ է ունենում:

Օգուտ ծնողին.

- Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին:
- Երեխային տալիս է հնարավորություն ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնախնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ:

Օգուտ ուսուցչին.

Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին:



<u>Օգուտ դպրոցին.</u>

Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ:

Դասապրոցեսին ծնողների մասնակցությունը կարելի է կազմակերպել շատ արդյունավետ, լիարժեք և հետաքրքիր: Բերենք մի օրինակ:

Դասի թեման վերաբերում է աշնանը: Երեխաները բաժանվում են խմբերի: Յուրաքանչյուր խումբ ստանում է հանձնարարություն: Խմբերի աշխատանքները վերահսկվում են ծնողների կողմից: Առաջին խումբը աշնան մասին բանաստեղծություններ կամ պատմվածքներ է ընտրում: Երկրորդ խումբն ընտրում է համապատասխան պար և երաժշտություն: Երրորդ խումբը բերում է նկարներ աշնան վերաբերյալ: Չորրորդ խումբը ներկայացնում է փոքրիկ սցենար: Հինգերորդը ներկայացնում է աքրոստիկոսներ, հնգյակներ, հանելուկներ, բերում է մրգեր: Համատեղ քննարկումների արդյունքում որոշվում է այս ամենը ամփոփել մի ամբողջական աշնանային տոնահանդեսում:

Ուսուցչի և ծնողների համագործակցության բովանդակությունն իր մեջ երեք հիմնական ուղղություններ է ներառում՝ ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածությունը, նրանց մասնակցությունը ուսումնադաստիարակչական գործընթացին և նրանց մասնակցությունը դպրոցի կառավարմանը:

Ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածությունը ենթադրում է ընտանիքների հետ աշխատանքի հետևյալ ձևերի կազմակերպում.

- անհատական և թեմատիկ խորհրդատվություններ
- ծնողական ժողովներ
- սեմինարներ

Ծնողներին դասարանի ուսումնադաստիարակչական աշխատանքերին կարելի է ներգրավել՝ կազմակերպելով գործունեության հետևյալ ձևերը.

- բաց դասեր ու արտադասարանական միջոցառումներ
- մասնակցություն դպրոցի ու դասարանի աշխատանքներին

Ծնողների մասնակցությունը դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարմանը կարելի է կազմակերպել հետևյալ ձևերով.

- դասարանի ծնողների մասնակցությունը դպրոցի խորհրդի աշխատանքներին
- ծնողի մասնակցությունը դպրոցի կազմակերպչական աշխատանքերին:

Միասին ավելի
արդյունավետ է
Տուն
Դպրոց
Ես

Եզրակացություն

Այսպիսով՝ երեխայի ուսումնադաստիրակչական գործունեության ճանապարհին ուսուցիչը և ծնողը ոչ թե պետք է համընթաց քայլեն երեխայի հետ, այլ մի քանի քայլ առաջ՝ կանխատեսելու ուսումնադաստիրակչական գործընթացում հնարավոր խոչընդոտները և օգնելու երեխային հնարավորինս սահուն և ճիշտ հաղթահարել դրանք: Ուսուցչի և ծնողի համագործակցությամբ, երեխայի՝ որպես անհատի, համակողմանի, ամբողջական զարգացումն ուսումնասիրելու արդյունքում ծնողը ուսուցչի հետ միասին դառնում են ուսուցման գործընթացի և արդյունքների համար պատասխանատվության կրողներ: Իսկ ուսուցումն այս դեպքում անձնակենտրոն է:

Օգտագործված գրականության ցանկ և հղումներ

1. Ռ.Մուրադյան, <<Դասղեկ>>

2. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf

Ամսագրեր

3. <<Նախաշավիղ>> - 4. 2010թ.

4. <<Նախաշավիղ>> - 5 - 6. 2001թ.

5. <<Նախաշավիղ>> -7. 2010թ.